

Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
նոյեմբերի 6-ի N 1580-Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
փետրվարի 9-ի N 175-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ, ՄՇԱԿՄԱՆ,
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգի նպատակներն են հանրային ներդրումների կառավարման բարելավումը, հանրային ներդրումային ծրագրերի արդյունավետության բարձրացումը և հաշվետվողականության ապահովումը:

2. Սույն կարգում օգտագործվող և սույն կետով չնախատեսված հասկացությունները գործածվում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքներով սահմանված իմաստով, եթե այլ բան չի բխում համապատասխան նորմի բովանդակությունից: Սույն կարգի իմաստով՝ ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

1) հանրային ներդրումը պետական և համայնքային բյուջեների (այդ թվում՝ կառավարության կողմից կնքվելիք միջազգային վարկային կամ դրամաշնորհային պայմանագրով նախատեսվող ֆինանսական միջոցների) հաշվին ոչ ֆինանսական ակտիվի ձեռքբերումն է (այդ թվում՝ ոչ ֆինանսական ակտիվի ստեղծումը, փոխարինումը) կամ էական բարելավումը, որը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համար առաջացնում է ծախս կամ պայմանական պարտավորություն: Սույն որոշման իմաստով էական բարելավում են համարվում ակտիվի արտադրողականության բարձրացմանը կամ շահագործման ժամկետի ավելացմանն ուղղված ակտիվի վերականգնումը, վերակառուցումը կամ ընդլայնումը: Սույն որոշման իմաստով

տով հանրային ներդրում չեն համարվում այն ծախսերը, որոնք ունեն պարբերական բնույթ և ուղղված են ոչ ֆինանսական ակտիվի ներկա վիճակի պահպանմանը: Սույն որոշման իմաստով հանրային ներդրումը ներառում է նաև «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով նախատեսված պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի իրականացման արդյունքում ոչ ֆինանսական ակտիվի ձեռքբերումը կամ էական բարելավումը.

2) հանրային ներդրումային ծրագիրը պետական և համայնքային բյուջեների (այդ թվում՝ կառավարության կողմից կնքվելիք միջազգային վարկային կամ դրամաշնորհային պայմանագրով նախատեսվող ֆինանսական միջոցների) հաշվին սահմանված ժամանակահատվածում և որոշակի կազմակերպական կառուցվածքով հստակ սահմանված նպատակներին և արդյունքներին միտված գործողությունների միջոցով իրականացվող հանրային ներդրում է: Հանրային ներդրումային ծրագիրը կարող է ներառվել պետական բյուջեում որպես առանձին բյուջետային ծրագիր կամ բյուջետային ծրագրի միջոցառում.

3) փոքր հանրային ներդրումային ծրագիր՝ 1 միլիարդ ՀՀ դրամից պակաս արժեք ունեցող հանրային ներդրումային ծրագիր.

4) միջին հանրային ներդրումային ծրագիր՝ 1 միլիարդ ՀՀ դրամից մինչև 4 միլիարդ դրամ արժեք ունեցող հանրային ներդրումային ծրագիր.

5) խոշոր հանրային ներդրումային ծրագիր՝ 4 միլիարդ ՀՀ դրամ և ավել արժեք ունեցող հանրային ներդրումային ծրագիր.

6) հանրային ներդրումների կառավարում (ՀՆԿ)՝ հանրային ֆինանսների կառավարման շրջանակներում հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, առաջնահերթությունների սահմանման և ընտրության համակարգ.

7) հանրային ներդրումային ծրագրի նախագծի հայեցակարգ՝ հանրային ներդրումների իրականացման նպատակով միջին և խոշոր ներդրումային ծրագրի ամփոփ նկարագիր և նախնական տնտեսական վերլուծություն, որն իրավասու մարմնի կողմից տրամադրվում է ՀՀ ֆինանսների նախարարությանը.

8) հանրային ներդրումային ծրագրի (ծրագրի) նախնական գնահատում՝ ծրագրի նախագծի հայեցակարգի հիման վրա սույն կարգի 8-րդ գլխով նախատեսված հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի գնահատման մեթոդաբանության համաձայն իրականացված նախնական գնահատում.

9) հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի գնահատում՝ հանրային ներդրումային ծրագրի նախագծի տեխնիկատնտեսական ուսումնասիրության (սույն կարգով նախատեսված դեպքերում՝ նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման) հիման վրա սույն կարգի 8-րդ գլխով նախատեսված հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի գնահատման մեթոդաբանության համաձայն իրականացված գնահատում.

10) հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի գնահատման չափորոշիչներ (չափորոշիչներ)՝ հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի գնահատման նպատակով սահմանվող սույն կարգի 40-րդ կետով նախատեսված չափորոշիչներ.

11) նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում (pre-feasibility study)՝ հանրային ներդրումային ծրագրին առնչվող էական նշանակություն ունեցող բոլոր հարցերի, այդ թվում՝ տնտեսական, ֆինանսական, սոցիալական, շրջակա միջավայրի, տեխնիկական, իրավական, իրականացման ժամկետների և հնարավոր այլընտրանքային տարբերակների վերաբերյալ կատարված նախնական ուսումնասիրություն, որի արդյունքում տրամադրվում է ծրագրի իրականացման հնարավորության, ինչպես նաև ռիսկերի վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը: Նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման բովանդակության նվազագույն պահանջները սահմանված են սույն կարգի 2և 2-ով: Նախնական տեխնիկատնտեսական հիմնավորումն իրականացվում է նախնական և ոչ առաջնային (այլ աղբյուրներից ստացված) տվյալների կիրառմամբ՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված ուղեցույցները, իսկ մինչև դրանց հաստատումը՝ համադրելի ծրագրերի դեպքում միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացվող նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման նկատմամբ կիրառելի պահանջները.

12) տեխնիկատնտեսական ուսումնասիրություն (feasibility study)՝ հանրային ներդրումային ծրագրի նախագծին առնչվող էական նշանակություն ունեցող բոլոր հարցերի, այդ թվում՝ տնտեսական, ֆինանսական, սոցիալական, շրջակա միջավայրի, տեխնիկական, իրավական, իրականացման ժամկետների վերաբերյալ կատարված ուսումնասիրություն, որի արդյունքում տրամադրվում է ծրագրի նախագծի իրականացման հնարավորության, ինչպես նաև ռիսկերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն: Տեխնիկատնտեսական ուսումնասիրության բովանդակության նվազագույն պահանջները սահմանված են սույն կարգի Ձև 2-ով: Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունն իրականացվում է առաջնային (կոնկրետ տեղանքի և իրականացվող ծրագրի վերաբերյալ) տվյալների կիրառմամբ՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված ուղեցույցները, իսկ մինչև դրանց հաստատումը՝ համադրելի ծրագրերի դեպքում միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացվող տեխնիկատնտեսական ուսումնասիրության նկատմամբ կիրառելի պահանջները:

13) իրավասու մարմին՝ պետական կառավարման համակարգի այն մարմինը, որը տվյալ ծրագրի հետ ամենասերտ առնչություն ունեցող, ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու մարմինն է, պետական ոչ առևտրային կազմակերպության ծրագրի դեպքում՝ այն պետական կառավարման համակարգի մարմինը, որի ենթակայությանը հանձնված է պետական կազմակերպությունը, այն տեղական ինքնակառավարման մարմինը, որի բյուջեում ներառվելու են տվյալ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցները,

14) հանրային ներդրումային կոմիտե՝ աշխատանքային կոմիտե, որի կազմը, աշխատակարգը և գործառույթները սահմանվում են սույն որոշմամբ:

15) հանրային ներդրումային ծրագրերի տվյալների բազա՝ սույն կարգի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված բոլոր հանրային ներդրումային ծրագրերի և ծրագրերի նախագծերի շտեմարան:

16) հրատապ ծրագիր՝ բնածին, տեխնածին աղետների կամ այլ արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած՝ ծրագրի իրականացման անհետաձգելի

պահանջով պայմանավորված հանրային ներդրումային ծրագիր, որի դեպքում սույն կարգով նախատեսված ընդհանուր ընթացակարգի կիրառումն անհնար է.

17) առաջնահերթությունների ցանկ՝ սույն կարգի 8-րդ գլխով նախատեսված հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի գնահատման մեթոդաբանության համաձայն իրականացված գնահատման արդյունքների հիման վրա ձևավորված հանրային ներդրումային ծրագրերի ցանկ.

18) ծրագրի իրականացման պլան՝ փաստաթուղթ, որը ներկայացնում է հանրային ներդրումային ծրագրի մանրամասն գործողությունների հաջորդականությունը, ժամկետները, պատասխանատու կողմերին, նախագծման, գնումների, ֆինանսավորման և գործարկման փուլերը, ծրագրի վերահսկման գործընթացը և մեխանիզմները, ինչպես նաև գնահատված վերջնական արժեքը և ռիսկերի կառավարման մեխանիզմները.

19) ծրագրի հասունության ձևաթուղթ՝ փաստաթուղթ, որը նախատեսված է հանրային ներդրումային ծրագրի պատրաստվածության մակարդակի գնահատման համար և ներառում է տեղեկատվություն նախագծման ավարտվածության, ֆինանսավորման աղբյուրների ապահովվածության, գնումների պլանավորման, արտոնագրերի և թույլտվությունների առկայության (կախված հանրային ներդրումային ծրագրի առանձնահատկություններից), ինչպես նաև այլ գործոնների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են ծրագրի արդյունավետ մեկնարկի համար: Ծրագրի հասունության ձևաթղթի ձևաչափը սահմանված է սույն կարգի 2և 4-ով.

20) վարչական բնույթի կապիտալ ծախսեր՝ այն ծախսերը, որոնք ուղղված են տվյալ մարմնի ընդհանուր ղեկավարման, համակարգման և ներքին գործառնությունների իրականացմանը և անհրաժեշտ են տվյալ մարմնի ինստիտուցիոնալ և գործառնական կարողությունների պահպանման համար:

3. Սույն կարգը կիրառելի չէ՝

1) ամբողջությամբ համայնքային բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք հանդիսանում են «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով նախատեսված պետություն-մասնավոր գործընկերության ծրագրեր.

2) հրատապ և պետական գաղտնիք պարունակող ծրագրերի նկատմամբ.

3) բացառապես վարչական բնույթի կապիտալ ծախսեր ենթադրող ծրագրերի նկատմամբ.

4) այն կապիտալ ծախսերի նկատմամբ, որոնք ունեն պարբերական բնույթ և ուղղված են ակտիվի ներկա վիճակի պահպանմանը.

5) փոքր հանրային ներդրումային ծրագրերի նկատմամբ.

6) բացառիկ դեպքերում՝ ՀՀ կառավարության ծրագրից և ռազմավարական նպատակներից ուղղակիորեն բխող ծրագրերի նկատմամբ, որոնց ցանկը հաստատվում է հանրային ներդրումային կոմիտեի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած հիմնավորումների և եզրակացության հիման վրա: Ընդ որում, սույն ենթակետը կիրառելի է միայն մինչև 2028 թ. պետական բյուջեում ներառման ենթակա հանրային ներդրումային ծրագրերի նկատմամբ:

4. Մինևույն հանրային ենթակառուցվածքի մաս կազմող կամ դրա սպասարկման նպատակով իրականացվող առանձին հանրային ներդրումային ծրագրերը սույն կարգի իմաստով միավորվում են մեկ հանրային ներդրումային ծրագրում:

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

5. Իրավասու մարմինը պատասխանատու է՝

1) հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, հայեցակարգի և ծրագրի նախագծի մշակման համար.

2) ծրագրերի նախագծերի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորումների և տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների մշակման համար.

3) ծրագրի նախագծում արձանագրված թերությունների լրամշակման և շտկման համար.

4) ծրագրերի իրականացման պլանի և հասունության ձևաթղթի պատրաստման և շարունակական թարմացման համար.

5) հաստատված և բյուջետավորված ծրագրի իրականացման և ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ մշտադիտարկման համար:

6. ՀՀ ֆինանսների նախարարությունը պատասխանատու է՝

1) իրավասու մարմնի կողմից մշակված և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ներդրումային ծրագրերի որակի ստուգման համար.

2) ծրագրերի նախագծերի նախնական գնահատման համար.

3) ծրագրերի նախագծերի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորումների և տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների որակի ստուգման համար.

4) ծրագրերի նախագծերի գնահատման համար.

5) պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով ծրագրերի նախագծերի իրականացման հնարավորության թեստավորման համար.

6) հանրային ներդրումային ծրագրերի տվյալների բազայի վարման համար.

7) առաջնահերթությունների ցանկի վարման համար.

8) ՀՆԿ գործընթացն ապահովող փաստաթղթերի օրինակելի ձևերի և ուղեցույցների մշակման, հաստատման և հրապարակման համար.

9) ծրագրերի նախագծի մշակման ընթացքում իրավասու մարմնին մեթոդաբանական աջակցության տրամադրման համար.

10) հանրային ներդրումային կոմիտեին ծրագրի նախագծի ներկայացմանը հաջորդող հինգ տարիների բյուջետային սահմանափակումների (ֆիսկալ տարածություն) վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար.

11) իրականացման փուլում գտնվող ծրագրերի մշտադիտարկման համար:

7. Հանրային ներդրումային կոմիտեն պատասխանատու է սույն կարգի 40-րդ կետով նախատեսված չափորոշիչների հիման վրա գնահատված հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի նախնական ընտրության, ծրագրերի նախագծերի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման և տեխնիկատնտեսական ուսումնասիրության մշակումը հանձնարարելու, ծրագրերի նախագծերի իրականացման մերժման, պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով ծրագրերի նախագծերի իրականացման հետագա ընթացքի, առաջնահերթությունների ցանկում ծրագրերի ներառման վերաբերյալ որոշման և սույն կարգով նախատեսված այլ որոշումների կայացման համար:

3. ՀՆԿ ԳՈՐԾՆՆԹԱՑԻ ՓՈԽԼԵՐԸ

8. ՀՆԿ գործընթացի՝ սույն կարգով կարգավորվող փուլերն են՝

1) ծրագրի նախագծի վերհանում, մշակում և նախնական գնահատում.

2) ծրագրի նախագծերի նախնական ընտրություն.

3) ծրագրի նախագծի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման և տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացում, դրանց որակի ստուգում և որոշումների կայացում.

4) ծրագրերի նախագծերի գնահատում, որոշումների կայացում և առաջնահերթությունների սահմանում.

5) ծրագրերի մշտադիտարկում:

4. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՀԱՆՈՒՄԸ, ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

9. Իրավասու մարմինն իրականացնում է պոտենցիալ հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերհանում: Վերհանված հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի համար իրավասու մարմնի կողմից մշակվում են ծրագրերի նախագծերի հայեցակարգերը, որոնք պետք է համապատասխանեն սույն կարգի Ձև 1-ով սահմանված պահանջներին:

10. Սույն կարգի 9-րդ կետի համաձայն մշակված նախագծի հայեցակարգը իրավասու մարմինն ուղարկում է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ որակի ստուգում և ծրագրի նախագծի նախնական գնահատում իրականացնելու նպատակով: Սույն կարգի իմաստով ծրագրի նախագծի որակի ստուգումը սույն կարգի Ձև 1-ով սահմանված ձևին ծրագրի նախագծի հայեցակարգի լրացվածության համապատասխանության ստուգումն է՝ բավարար կամ ոչ բավարար կամ ոչ հստակ սկզբունքով:

11. Իրավասու մարմինը, ծրագրի նախագծի հայեցակարգը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելիս, նախագծի հետ միասին ներկայացնում է նաև ծրագրի հասունության ձևաթուղթը: Ընդ որում, իրավասու մարմինը պարտավոր է հասունության ձևաթուղթը մշտապես թարմացնել՝ ՀՆԿ գործընթացի հետագա փուլերում արդի տարրերակը ներկայացնելով ՀՀ ֆինանսների նախարարություն:

12. ՀՀ ֆինանսների նախարարությունը նախագծի հայեցակարգը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ծրագիրը ներառում է հանրային ներդրումային ծրագրերի տվյալների բազայում:

13. Նախագծի հայեցակարգը ստանալուց հետո ՀՀ ֆինանսների նախարարությունը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է որակի ստուգում և՝

1) հայեցակարգը ոչ բավարար կամ ոչ հստակ գնահատելու դեպքում վերադարձնում է վերջինս լրամշակման՝ նշելով լրամշակման անհրաժեշտություն ունեցող կետերը: Իրավասու մարմինը 15 աշխատանքային օրվա ընթացքում լրամշակում և լրամշակված նախագծի հայեցակարգն ուղարկում է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հաշվի առնելով լրամշակման անհրաժեշտություն ունեցող բոլոր կետերի վերաբերյալ տրամադրված նկատառումները:

2) հայեցակարգը բավարար որակելու դեպքում 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է ծրագրի նախագծի նախնական գնահատում, իրականացնում պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով ծրագրերի նախագծերի իրականացման հնարավորության թեստավորում, կազմում արդյունքների վերաբերյալ եզրակացություն և ուղարկում այն ի գիտություն իրավասու մարմնին:

14. ՀՀ ֆինանսների նախարարությունը եռամսյակը մեկ սույն գլխով սահմանված ընթացակարգով նախնական գնահատում անցած միջին և խոշոր ծրագրերի վերաբերյալ եզրակացություններն ուղարկում է հանրային ներդրումային կոմիտեին:

5. ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

15. Հանրային ներդրումային կոմիտեն, հիմք ընդունելով 13-րդ կետով սահմանված կարգով ստացված ծրագրերի նախագծերի նախնական գնահատման արդյունքները, քննարկում է ծրագրերի նախագծերը և կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

1) մերժել ծրագրի նախագծի իրականացումը:

2) հանրային ներդրումային կոմիտեի դիտողություններով և առաջարկություններով ծրագրի նախագիծը վերադարձնել իրավասու մարմնին՝ լրամշակման, որի դեպքում հստակ նշվում են լրամշակում պահանջող համապատասխան կետերը՝ անհրաժեշտ փոփոխությունների նկարագրությամբ.

3) հաստատել ծրագրի նախագիծը և իրավասու մարմնին հանձնարարել մշակել՝ ա. տեխնիկատնտեսական ուսումնասիրություն միջին հանրային ներդրումային ծրագրերի դեպքում,

բ. նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում խոշոր հանրային ներդրումային ծրագրերի դեպքում, եթե վերջինները ենթադրում են բարդ տեխնոլոգիական լուծումներ, նախատեսվող ծառայությունների մատուցման դիմաց հանրությունից գանձվող վճարներ, կամ ունեն նշանակալի բնապահպանական և սոցիալական ազդեցություններ,

գ. տեխնիկատնտեսական ուսումնասիրություն խոշոր հանրային ներդրումային ծրագրերի դեպքում, եթե վերջինս չի համապատասխանում սույն ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված դրույթներին.

4) հաստատել ծրագրի նախագիծը և իրավասու մարմնին հանձնարարել իրականացնելու ծրագրի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում՝ համաձայն ՊՄԳ ընթացակարգի (համաձայն «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի), եթե ծրագիրը ենթակա է իրականացման պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով:

16. Որոշման կայացումից հետո իրավասու մարմինը, կախված ծրագրի նախագծի վերաբերյալ հանրային ներդրումային կոմիտեի որոշումից, կարող է՝

1) դադարեցնել ծրագրի նախագծի մշակման աշխատանքները, եթե հանրային ներդրումային կոմիտեն ընդունել է սույն կարգի 15-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված որոշումը.

2) հանրային ներդրումային կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների համաձայն լրամշակել ծրագրի նախագիծը, եթե հանրային ներդրումային կոմիտեն ընդունել է սույն կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որոշումը: Իրավասու մարմինը հանրային ներդրումային կոմիտեի նիստից հետո 5

աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հանրային ներդրումային կոմիտեին վերոնշյալ դիտողությունների և առաջարկությունների հիման վրա նախագծի լրամշակման աշխատանքների համար պահանջվող ժամանակահատվածի վերաբերյալ և ապահովում է նախագծի լրամշակման աշխատանքներն այդ ժամանակահատվածում: Այս դեպքում իրավասու մարմինը ծրագրի լրամշակված տարբերակն ուղարկում է ՀՀ ֆինանսների նախարարություն: ՀՀ ֆինանսների նախարարությունը՝

ա. նախագծի լրամշակված տարբերակը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է որակի ստուգում՝ այդ թվում ուսումնասիրելով հանրային ներդրումային կոմիտեի կողմից ներկայացված առաջարկությունների հաշվի առնված լինելը,

բ. նախագծի հայեցակարգը ոչ բավարար կամ ոչ հստակ գնահատելու, կամ հանրային ներդրումային կոմիտեի առաջարկությունների հաշվի առնված լինելը ոչ ամբողջական գնահատելու դեպքում վերադարձնում է վերջինս լրամշակման՝ նշելով լրամշակման անհրաժեշտություն ունեցող կետերը: Իրավասու մարմինը լրամշակում և լրամշակված նախագծի հայեցակարգն ուղարկում է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հաշվի առնելով լրամշակման անհրաժեշտություն ունեցող բոլոր կետերի վերաբերյալ տրամադրված նկատառումները,

գ. նախագծի հայեցակարգը բավարար որակելու դեպքում 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է ծրագրի նախագծի նախնական գնահատման թարմացում, կազմում է արդյունքների վերաբերյալ եզրակացություն և ծրագիրը ներկայացնում է հանրային ներդրումային կոմիտեին՝ այդ մասին տեղեկացնելով իրավասու մարմնին.

3) հաշվի առնելով հանրային ներդրումային կոմիտեի կողմից սահմանված մեկնարկի ժամկետը՝ իրականացնել ծրագրի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման կամ տեխնիկատնտեսական ուսումնասիրության մշակումը, եթե հանրային ներդրումային կոմիտեն ընդունել է սույն կարգի 15-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված որոշումներից մեկը: Իրավասու մարմինը հանրային ներդրումային կոմիտեի նիստից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում

տեղեկացնում է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հանրային ներդրումային կոմիտեին ծրագրի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման կամ տեխնիկատնտեսական ուսումնասիրության մշակման աշխատանքների համար պահանջվող ժամանակահատվածի վերաբերյալ և ապահովում է վերջիններիս մշակումն այդ ժամանակահատվածում:

4) իրականացնել ծրագրի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման մշակումը՝ համաձայն ՊՄԳ ընթացակարգի (համաձայն «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի), եթե ծրագիրը ենթակա է իրականացման պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով և հանրային ներդրումային կոմիտեն ընդունել է սույն կարգի 15-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որոշումը: Իրավասու մարմինը հանրային ներդրումային կոմիտեի նիստից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հանրային ներդրումային կոմիտեին սույն ենթակետում նշված աշխատանքների համար պահանջվող ժամանակահատվածի վերաբերյալ և ապահովում է վերջիններիս իրականացումն այդ ժամանակահատվածում:

**6. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ
ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ**

17. Ծրագրի նախագծի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման կամ տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացման պատասխանատվությունը կրում է իրավասու մարմինը: Այդ նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունն իրավասու մարմինն ցուցաբերում է մեթոդաբանական աջակցություն: Ծրագրի նախագծի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման կամ տեխնիկատնտեսական ուսումնասիրության համար կազմվող տեխնիկական բնութագրերն իրավասու մարմինը պետք է համաձայնեցնի ՀՀ ֆինանսների նախարարության հետ: Նախնական տեխնիկատնտեսական հիմնավորումը և տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը պետք է պարունակեն սույն կարգի 2և 2-ով հաստատված անհրաժեշտ տեղեկատվությունը:

18. Նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման կամ տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները նախատեսվում են ՀՀ ֆինանսների նախարարության բյուջեում՝ հաստատվելով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով՝ ելնելով ֆիսկալ հնարավորություններից, և կարող են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նպատակային հատկացմամբ տրամադրվել համապատասխան իրավասու մարմիններին՝ նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման կամ տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացման աշխատանքների կազմակերպման համար:

19. Սույն կարգի 15-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որոշման կայացման դեպքում համապատասխան ծրագրի պատրաստման, հաստատման և իրականացման հաջորդող փուլերի նկատմամբ կիրառվում է ՊՄԳ ընթացակարգը՝ համաձայն «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի: Եթե սույն կարգի 15-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որոշմանը հաջորդող որևէ փուլում ծրագրի իրականացումը պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով իրականացման ենթակա չէ, ապա իրավասու մարմինը կարող է ծրագրի նախագիծը համապատասխան փոփոխություններ իրականացնելուց հետո կրկին ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ սույն կարգի 15-րդ կետով սահմանված գործընթացն իրականացնելու համար: Ընդ որում, եթե ծրագրի համար կազմվել է նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում, որը համապատասխանում է ՊՄԳ ընթացակարգին, նոր նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում չի պահանջվում, և իրավասու մարմինն առաջնորդվում է սույն կարգի 20-րդ կետով:

20. Իրավասու մարմինը նախնական տեխնիկատնտեսական հիմնավորումը կամ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ծրագրի նախագծի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման կամ տեխնիկատնտեսական ուսումնասիրության որակի ստուգում իրականացնելու նպատակով:

21. ՀՀ ֆինանսների նախարարությունն իրականացնում է ծրագրի նախագծի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման կամ տեխնիկատնտեսական

ուսումնասիրության Ձև 2-ով սահմանված պահանջներին և իր կողմից ընդունված ուղեցույցներին համապատասխանության ստուգում և արդյունքները 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում իրավասու մարմին:

22. Իրավասու մարմինը, սույն կարգի 21-րդ կետով նախատեսված որակի ստուգման արդյունքները ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացնում նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման կամ տեխնիկատնտեսական ուսումնասիրության լրամշակված տարբերակը: Եթե նշված ժամկետում լրամշակման իրականացումը հնարավոր չէ ապահովել, ապա իրավասու մարմինը նույն ժամկետում տեղեկացնում է ՀՀ ֆինանսների նախարարությանը լրամշակման համար անհրաժեշտ լրացուցիչ ժամկետի վերաբերյալ և ապահովում է լրամշակման իրականացումն այդ ժամկետում:

23. ՀՀ ֆինանսների նախարարությունը լրամշակված տարբերակը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է լրամշակված տարբերակի՝ 21-րդ կետով սահմանված ստուգումը, և, եթե այն համապատասխանում է սահմանված պահանջներին, ապա 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է ծրագրի նախագծի գնահատում և պատրաստում է եզրակացություն: Եթե ստուգման արդյունքում լրամշակված տարբերակը չի համապատասխանում սահմանված պահանջներին, ՀՀ ֆինանսների նախարարությունը սույն կարգի 21-րդ կետով սահմանված կարգով արդյունքները ներկայացնում է իրավասու մարմին:

24. Եթե նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման կամ տեխնիկատնտեսական ուսումնասիրության որակի ստուգման արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարությունն իրավասու մարմին չի ներկայացրել դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ, ապա ՀՀ ֆինանսների նախարարությունը որակի ստուգում իրականացնելուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է ծրագրի նախագծի գնահատում՝ համաձայն սույն կարգի 8-րդ գլխով նախատեսված մեթոդաբանության, պատրաստում է եզրակացություն և այն նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման կամ

տեխնիկատնտեսական ուսումնասիրության հետ միասին ներկայացնում է հանրային ներդրումային կոմիտե:

**7. ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ,
ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՆ ԵՎ
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ**

25. Հանրային ներդրումային կոմիտեն, ստանալով ծրագրերի նախագծերի՝ սույն կարգի 8-րդ գլխով նախատեսված մեթոդաբանության համաձայն իրականացված գնահատման արդյունքները և սույն կարգի 24-րդ կետով նախատեսված եզրակացությունը, քննարկում է դրանք և կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

1) մերժել ծրագրի իրականացումը.

2) հաստատել ծրագրի նախագիծը և ներառել այն առաջնահերթությունների ցանկում.

3) հաստատել ծրագրի նախագծի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորումը և հանձնարարել իրավասու մարմնին իրականացնելու ծրագրի նախագծի տեխնիկատնտեսական ուսումնասիրության աշխատանքներ:

26. Հանրային ներդրումային կոմիտեի նիստի արձանագրությունը ստանալուց հետո իրավասու մարմինը՝

1) դադարեցնում է ծրագրի մշակման աշխատանքները, եթե հանրային ներդրումային կոմիտեն ընդունել է սույն կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված որոշումը.

2) մշակում է ծրագրի իրականացման պլանը և կարող է ծրագիրը ներառել համապատասխան ժամանակաշրջանի բյուջետային հայտում՝ ծրագրերի առաջնահերթությունների ցանկին համապատասխան, եթե հանրային ներդրումային կոմիտեն ընդունել է սույն կարգի 25-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որոշումը.

3) իրականացնում է ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրության աշխատանքները, եթե հանրային ներդրումային կոմիտեն ընդունել է սույն կարգի 25-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված որոշումը: Իրավասու մարմինը հանրային ներդրումային կոմիտեի նիստից հետո 10 աշխատանքային օրվա ընթաց-

քում տեղեկացնում է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հանրային ներդրումային կոմիտեին ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրության մշակման աշխատանքների համար պահանջվող ժամանակահատվածի վերաբերյալ և ապահովում է վերջինիս մշակումն այդ ժամանակահատվածում:

27. ՀՀ ֆինանսների նախարարությունը ծրագիրը ներառում է առաջնահերթությունների ցանկում, եթե հանրային ներդրումային կոմիտեն ընդունել է սույն կարգի 25-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որոշումը:

28. Առաջնահերթությունների ցանկը ձևավորվում է բոլոր գնահատված ծրագրերի նախագծերի գնահատման արդյունքների հիման վրա: Առաջնահերթությունների ցանկը ներառում է ծրագրերի գնահատականները և մշտապես թարմացվում՝ համաձայն գնահատման արդյունքների: Այն դեպքում, երբ գնահատման արդյունքում ծրագրերը ստանում են միևնույն գնահատականը, ապա առաջնահերթությունների ցանկում առավել առաջնահերթ է համարվում առաջնահերթությունների ցանկում ավելի վաղ ներառված, կամ նույն ժամանակահատվածում առաջնահերթությունների ցանկում ներառված լինելու դեպքում, հանրային ներդրումային ծրագրերի տվյալների բազայում ավելի վաղ ներառված ծրագիրը:

29. ՀՀ ֆինանսների նախարարությունը ծրագիրը հանում է առաջնահերթությունների ցանկից ծրագրի իրականացման փուլ անցնելու՝ Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեում ներառվելու պահից:

30. Հանրային ներդրումային ծրագրերի առաջնահերթությունների ցանկը վարում է ՀՀ ֆինանսների նախարարությունը: Ցանկը հրապարակվում է ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում և թարմացվում՝ տեղեկատվության արդիականությունն ապահովելու նպատակով:

31. Միջին և խոշոր հանրային ներդրումային ծրագրերը կարող են ներառվել պետական բյուջեում բացառապես առաջնահերթությունների ցանկում ներառվելուց հետո:

32. ՀՀ ֆինանսների նախարարությունը վարում է հանրային ներդրումային ծրագրերի տվյալների բազան, որը պարունակում է սույն կարգի Ձև 3-ում նշված տեղեկատվությունը:

33. ՀՀ ֆինանսների նախարարությունը հրապարակում է հանրային ներդրումային ծրագրերի տվյալների բազան իր պաշտոնական կայքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության իրավական ակտով սահմանված կարգով և ծավալով:

34. ՀՀ ֆինանսների նախարարությունն իրականացնում է բյուջետավորված և իրականացման փուլում գտնվող ծրագրերի մշտադիտարկում: Վերջինս իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա տվյալների հիման վրա, սակայն սկզբնապես հաստատված ֆիզիկական կամ ֆինանսական ցուցանիշների համեմատ փաստացի շեղումների արձանագրման դեպքում ՀՀ ֆինանսների նախարարությունը կարող է իրավասու մարմիններից պահանջել շեղումների և դրանց հիմքում ընկած պատճառների վերաբերյալ մանրամասն պարզաբանում, ինչպես նաև շեղումները վերացնելուն ուղղված գործողությունների ծրագիր:

35. Իրականացման փուլում գտնվող ծրագրերի մշտադիտարկման արդյունքների հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունը, անհրաժեշտության դեպքում, կարող է մշակել և հանրային ներդրումային կոմիտե ներկայացնել մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ զեկույց, որը կքննարկվի հանրային ներդրումային կոմիտեի նիստում: Ընդ որում, զեկույցի պատրաստման և ներկայացման անհրաժեշտությունը կարող է առաջանալ հանրային ներդրումային ծրագրի ֆիզիկական կամ ֆինանսական ցուցանիշների էական և շարունակական շեղումների արձանագրման դեպքում:

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

36. Սույն մեթոդաբանությամբ սահմանվում են հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի գնահատման չափորոշիչները և դրանց հիման վրա ծրագրերի նախագծերի գնահատման կարգը:

37. Հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի գնահատման հիմնական սկզբունքը ծրագրերի նկատմամբ միասնական չափորոշիչների կիրառումն է:

38. Ծրագրի նախագծի գնահատման արդյունքում ձևավորվում է հանրային ներդրումային ծրագրի գնահատականը:

39. ՀՀ ֆինանսների նախարարության ներքին իրավական ակտերով կարող են սահմանվել հանրային ներդրումային ծրագրերի գնահատման և պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով ծրագրերի իրականացման հնարավորության թեստավորման վերաբերյալ ուղեցույցներ:

40. Հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի գնահատման չափորոշիչներն են՝

1) մարդկային կապիտալի վրա ազդեցությունը.

2) ենթակառուցվածքի հանրային նշանակությունը, որով գնահատվում են հանրային ծառայությունների մատուցման տեսանկյունից տվյալ ծրագրի իրականացման հրատապությունն ու անհրաժեշտությունը.

3) ռազմավարության համապատասխանությունը, որով գնահատվում է ծրագրի նախագծի ուղղակի, մասնակի կամ անուղղակի համապատասխանությունը տվյալ ոլորտային ռազմավարությանը.

4) ծրագրի ազդեցությունը կլիմայի փոփոխության վրա.

5) ռիսկայնությունը, որով գնահատվում են ծրագրի իրականացմանը խոչընդոտող փաստացի արձանագրված ռիսկերը և դրանց կառավարելիությունը՝ ներառյալ կլիմայական և աղետների ռիսկերը.

6) տնտեսական շահութաբերության ներքին դրույքը (ՏՇՆԴ):

41. Մարդկային կապիտալի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) 3 միավոր գնահատվում են այն ծրագրերի նախագծերը, որոնք ուղղակի նպաստում են Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի ստեղծմանը կամ զարգացմանը: Ծրագիրը համարվում է մարդկային կապիտալ ստեղծող կամ զարգացնող, եթե դրանով թիրախավորվում է անչափահաս քաղաքացիների բարեկեցությունը (առողջություն, կրթություն, անվտանգություն, սոցիալականացում և այլն).

2) 2 միավոր գնահատվում են այն ծրագրերի նախագծերը, որոնք ունեն մարդկային կապիտալի իրացման հնարավորությունների ստեղծման նշանակություն,

և որոնց հիմնական թիրախն է չափահաս անձանց աշխատունակության շարունակականության ապահովումը և արտադրողականության բարձրացումը.

3) 1 միավոր գնահատվում են այն ծրագրերի նախագծերը, որոնք ուղղված են մարդկային կապիտալի կարողությունների շարունակական զարգացմանը, և որոնց իրականացման հիմնական թիրախը չափահաս քաղաքացիների կողմից եկամուտներ գեներացնելուն կամ հանրային բարիք ստեղծելուն միտված կարողության բարձրացումն է:

42. Ենթակառուցվածքի հանրային նշանակության գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) 3 միավոր գնահատվում են այն ծրագրերի նախագծերը, որոնց չիրականացման դեպքում՝ հանրային բարիքի ստեղծումը կամ հանրային ծառայության մատուցումը դառնում է անհնարին, կամ որոնց իրականացումն օրենսդրությամբ հստակ սահմանված պահանջ է.

2) 2 միավոր գնահատվում են այն ծրագրերի նախագծերը, որոնց իրականացումը հանգեցնում է հանրային բարիքի ստեղծման կամ հանրային ծառայության մատուցման տեսանկյունից էական բարելավումների.

3) 1 միավոր գնահատվում են այն ծրագրերի նախագծերը, որոնց իրականացումը հանգեցնում է հանրային բարիքի ստեղծման կամ հանրային ծառայության մատուցման տեսանկյունից ոչ էական բարելավումների:

43. Ռազմավարությանը համապատասխանության գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) 3 միավոր գնահատվում են այն ծրագրերի նախագծերը, որոնց արդյունքներն անմիջականորեն ուղղված են ռազմավարությամբ ամրագրված խնդրի լուծմանը կամ նպատակի կամ ենթանպատակի իրականացմանը.

2) 2 միավոր գնահատվում են այն ծրագրերի նախագծերը, որոնց արդյունքների մի մասն առնչվում է ռազմավարությամբ ամրագրված խնդրի լուծմանը կամ նպատակի կամ ենթանպատակի իրականացմանը.

3) 1 միավոր գնահատվում են այն ծրագրերը, որոնք անմիջականորեն չեն նպաստում պետական կամ համայնքային ռազմավարական նպատակների իրագործմանը, կամ տվյալ ոլորտի ռազմավարություն առկա չէ:

44. Սույն մեթոդաբանության 41-րդ, 42-րդ և 43-րդ կետերով սահմանված չափորոշիչները կարող են գնահատվել 0 միավոր, երբ համապատասխան չափորոշիչով ծրագրի ազդեցությունը կամ դրան համապատասխանությունը բավարար հիմնավորված չէ կամ բացակայում է:

45. Ռիսկայնությունը գնահատելու համար պետք է հաշվի առնել ստորև ներկայացվող գործոնները՝

1) իրավասու մարմնի կողմից նմանատիպ ծրագրի իրականացման փորձի առկայությունը և արժեքը.

2) հաստատված պահանջարկի առկայությունը, ինչպես նաև հնարավոր արտաքին գործոնների ազդեցությունը ծրագրի արդյունավետ իրականացման վրա.

3) ռիսկերի հատկորոշումը և վերլուծությունը, ինչպես նաև դրանց կառավարելիությունը:

46. Հիմք ընդունելով սույն մեթոդաբանության 45-րդ կետով նախատեսված գործոնների վերլուծությունը՝ ծրագրի ռիսկայնության գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) 3 միավոր գնահատվում են ոչ ռիսկային ծրագրերը.

2) 2 միավոր գնահատվում են ցածր ռիսկային ծրագրերը.

3) 1 միավոր գնահատվում են միջին ռիսկային ծրագրերը.

4) 0 միավոր գնահատվում են բարձր ռիսկային ծրագրերը:

47. 46-րդ կետով սահմանված բաղադրիչով 0 միավոր ստանալը հիմք է հանդիսանում հանրային ներդրումային կոմիտեի կողմից ծրագրի իրականացումը մերժելու համար:

48. Ծրագրի նախագծի ազդեցությունը կլիմայի փոփոխության վրա գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) 2 միավոր գնահատվում են այն ծրագրերը, որոնք նպաստում են ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը՝ ներառյալ ածխաթթու գազը կամ

ստեղծում են ջերմոցային գազերի կլանիչներ կամ նպաստում են կլիմայական ռիսկերի նկատմամբ դիմակայունության ավելացմանը.

2) 1 միավոր գնահատվում են այն ծրագրերը, որոնք պարունակում են անուղղակի և ոչ էական կլիմայական օգուտներ, որոնք արտացոլվել են ծրագրի նախագծային փաստաթղթերում.

3) 0 միավոր գնահատվում են այն ծրագրերը, որոնք նպաստում են ջերմոցային գազերի արտանետումների ավելացմանը՝ ներառյալ ածխաթթու գազը կամ ծրագրի նախագծի հայեցակարգում կամ նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման կամ տեխնիկատնտեսական ուսումնասիրության մեջ առկա չէ տեղեկատվություն կամ ավելացնում են կլիմայական ռիսկերի նկատմամբ խոցելիությունը:

49. Տնտեսական շահութաբերության ներքին դրույքի հաշվարկն իրականացվում է համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված ուղեցույցների, իսկ մինչև դրանց հաստատումը՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հրապարակված մեթոդաբանությամբ:

50. Տնտեսական շահութաբերության ներքին դրույքի չափորոշիչով ծրագրերի նախագծերի գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) 3 միավոր գնահատվում են այն ծրագրերի նախագծերը, որոնց ՏՇՆԴ-ն ավելի քան 15 (տասնհինգ) տոկոսային կետով գերազանցում է ՏՇՆԴ բազային դրույքը.

2) 2 միավոր գնահատվում են այն ծրագրերի նախագծերը, որոնց ՏՇՆԴ-ն ավելի քան 5 (հինգ), բայց ոչ ավելի, քան 15 (տասնհինգ) տոկոսային կետով գերազանցում է ՏՇՆԴ բազային դրույքը.

3) 1 միավոր գնահատվում են այն ծրագրերի նախագծերը, որոնց ՏՇՆԴ-ն առնվազն 0,1 (զրո ամբողջ մեկ), բայց ոչ ավելի, քան 5 (հինգ) տոկոսային կետով գերազանցում է ՏՇՆԴ բազային դրույքը.

4) 0 միավոր գնահատվում են այն ծրագրերի նախագծերը, որոնք չեն համապատասխանում սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված պայմաններին:

51. Սույն մեթոդաբանության 50-րդ կետի իմաստով սոցիալական ոլորտի (առողջապահական և կրթական) ծրագրերի նախագծերի ՏՇՆԴ բազային դրույքը կազմում է 6 (վեց) տոկոս, իսկ մնացած ծրագրերի համար՝ 9 (ինը) տոկոս:

52. Տնտեսական շահութաբերության ներքին դրույքի նախնական գնահատումն իրականացվում է ծրագրի նախնական գնահատման փուլում, իսկ տնտեսական շահութաբերության ամբողջական գնահատումն իրականացվում է ծրագրի գնահատման փուլում:

9. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆ

53. Հանրային ներդրումային կոմիտեն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով (այդ թվում՝ հեռավար կարգով), որը նախագահում է հանրային ներդրումային կոմիտեի անդամ հանդիսացող ՀՀ վարչապետը:

54. Հանրային ներդրումային կոմիտեի կազմում ընդգրկվում են՝

- 1) ՀՀ փոխվարչապետները.
- 2) ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարը.
- 3) ՀՀ էկոնոմիկայի նախարարը.
- 4) ՀՀ ֆինանսների նախարարը:

55. Հանրային ներդրումային կոմիտեի հերթական նիստերը հրավիրվում են տարեկան առնվազն 3 (երեք) անգամ: ՀՀ վարչապետը սեփական նախաձեռնությամբ կամ ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկությամբ կարող է հրավիրել հանրային ներդրումային կոմիտեի արտահերթ նիստ:

56. Հանրային ներդրումային կոմիտեի նիստերը ձայնագրվում, արձանագրվում են և հրապարակման ենթակա չեն: Հանրային ներդրումային կոմիտեի նիստերի ձայնագրությունը վարում է ՀՀ վարչապետի աշխատակազմը և մինչև նիստին հաջորդող աշխատանքային օրն ուղարկում ձայնագրությունը քարտուղարին: Քարտուղարը նիստի ձայնագրությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում կազմում է հանրային ներդրումային կոմիտեի նիստի արձանագրու-

թյունը և այն պաշտոնապես տրամադրում հանրային ներդրումային կոմիտեի անդամներին ու հանրային ներդրումային կոմիտեի տվյալ նիստում քննարկված ծրագրերի նախագծերը ներկայացրած իրավասու մարմիններին:

57. Ըստ անհրաժեշտության՝ հանրային ներդրումային կոմիտեի նիստին կարող են հրավիրվել այլ անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

58. Նիստերն իրավագոր են, եթե մասնակցում է հանրային ներդրումային կոմիտեի անդամների առնվազն երկու երրորդը: Նիստերին հանրային ներդրումային կոմիտեի մեկ կամ ավել անդամի բացակայության դեպքում (բայց ոչ ավել, քան մեկ երրորդի բացակայության), հանրային ներդրումային կոմիտեի նիստերն անցկացվում են ՀՀ վարչապետի համաձայնությամբ: Նիստն իրավագոր չլինելու դեպքում ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկությամբ ՀՀ վարչապետը հրավիրում է արտահերթ նիստ:

59. Յուրաքանչյուր ծրագրի նախագծի վերաբերյալ հանրային ներդրումային կոմիտեի որոշումը կայացվում է նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ընթացքում հանրային ներդրումային կոմիտեի յուրաքանչյուր անդամ ունի 1 (մեկ) ձայնի իրավունք: Ձայների հավասար բաշխման պարագայում նիստը նախագահողն ունի որոշիչ ձայնի իրավունք:

60. Հանրային ներդրումային կոմիտեի գործունեության քարտուղարությունն ապահովում է ՀՀ ֆինանսների նախարարությունը: Հանրային ներդրումային կոմիտեի քարտուղարին նշանակում է ՀՀ ֆինանսների նախարարը:

61. Հանրային ներդրումային կոմիտեի նիստի օրակարգը ձևավորում է հանրային ներդրումային կոմիտեի քարտուղարը:

62. Հանրային ներդրումային կոմիտեի նախագահը որոշում է նիստի անցկացման օրը և ժամը:

63. Հանրային ներդրումային կոմիտեի նիստերի օրակարգում նշվում են՝

1) նիստի անցկացման օրը և ժամը.

2) քննարկման ենթակա հարցերը՝ գնահատված հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի անվանումները և ներկայացնող մարմինները:

64. Հանրային ներդրումային կոմիտեի նիստի օրակարգը և քննարկվելիք հարցերին վերաբերող մյուս անհրաժեշտ փաստաթղթերը հանրային ներդրումային կոմիտեի քարտուղարի կողմից հանրային ներդրումային կոմիտեի անդամներին ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ նիստի անցկացումից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ:

65. Հանրային ներդրումային կոմիտեի քարտուղարը հանրային ներդրումային կոմիտեի անդամներին ներկայացնում է նիստի օրակարգում ներառված հարցերը:

66. Օրակարգում ներառված քննարկման ենթակա ծրագրերի նախագծերի հերթականությունը նշվում է՝ ըստ վերջիններիս ստացման ամսաթվի:

67. Քննարկման ենթակա ծրագրերի նախագծերի հերթականությունը հանրային ներդրումային կոմիտեի նիստի ժամանակ կարող է փոփոխվել հանրային ներդրումային կոմիտեի անդամների առաջարկությամբ՝ հանրային ներդրումային կոմիտեի նախագահի համաձայնությամբ:

68. Հանրային ներդրումային կոմիտեի նախագահը՝

- 1) հաստատում է հանրային ներդրումային կոմիտեի նիստի օրակարգը.
- 2) վարում է հանրային ներդրումային կոմիտեի նիստերը.
- 3) ստորագրում է նիստերի արձանագրությունները.
- 4) որոշում է հանրային ներդրումային կոմիտեի նիստերին մասնակցելու համար հրավիրվող անձանց կազմը:

69. Հանրային ներդրումային կոմիտեի քարտուղարը՝

- 1) իրականացնում է հանրային ներդրումային կոմիտեի նիստերի կազմակերպման աշխատանքները.
- 2) ապահովում է հանրային ներդրումային կոմիտեի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումն ու տրամադրումը.
- 3) ապահովում է հանրային ներդրումային կոմիտեի նիստի արձանագրության կազմումը.
- 4) ապահովում է հանրային ներդրումային կոմիտեի գործունեության մասին տեղեկատվության պարբերական տեղակայումը ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում:

70. Հանրային ներդրումային կոմիտեի անդամները մասնակցում են գնահատված հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի նախնական ընտրությանը և վերջիններիս վերաբերյալ որոշումների կայացման համար անցկացվող քվեարկությանը:

71. Յուրաքանչյուր նիստի արձանագրությանը տրվում է հերթական համար:

72. Հանրային ներդրումային կոմիտեի նիստի արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, նիստն սկսվելու և ավարտելու ժամերը.

2) նիստի օրակարգը.

3) նիստին մասնակցող անձանց անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը.

4) քննարկվող հարցերը.

5) յուրաքանչյուր ծրագրի նախագծի վերաբերյալ հանրային ներդրումային կոմիտեի կողմից կայացված որոշումները՝ ըստ առաջնահերթության:

10. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

73. Սույն կարգը հաստատվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն ապահովում է հանրային ներդրումների կառավարման գործառույթին առնչվող, իր տիրապետության տակ գտնվող ամբողջ տեղեկատվության փոխանցումը ՀՀ ֆինանսների նախարարությանը:

74. Սույն կարգը հաստատվելուց հետո 6-ամսյա ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարությունը հաստատում է նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման և տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացման ուղեցույցները, ինչպես նաև տեխնիկատնտեսական ուսումնասիրության որակի ստուգաթերթը:

75. Սույն կարգի 74-րդ կետի իրականացումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն ուժը կորցրած է ճանաչում ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2024 թ. սեպտեմբերի 11-ի N 2284-Լ հրամանը:

**ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ (ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ)**

Բաժին 1. Ամփոփ տեղեկատվություն	
1.1. Ծրագրի նախագծի համարը	ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր ներկայացված ծրագրի նախագիծը համարակալում է հետևյալ ձևով. ներկայացման տարեթիվ և հաջորդական թիվ, օրինակ՝ 2022_001: Այս տողը լրացնում է ՀՀ ֆինանսների նախարարությունը, և այն ենթակա է փոփոխության իրավասու մարմնի կողմից:
1.2. Պատասխանատու իրավասու մարմին (ՀԱՅՏԱՏՈՒ)	Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
1.3. Ծրագրի նախագիծն իրականացնող մարմնի անվանումը	Օրինակ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե
1.4. Ծրագրի նախագծի անվանումը	Մուտքագրե՛ք ամբողջությամբ նախագծի ճիշտ անվանումը: Խուսափե՛ք հապավումներից կամ «աշխատանքային անվանումներից»: Նախագիծը գնահատելուց հետո նշված տարբերակը դառնում է ծրագրի պաշտոնական անվանումը:
1.5. Ծրագրի նախագծի ամփոփ նկարագրությունը	Հակիրճ նկարագրե՛ք նախագիծը և ներկայացրե՛ք նախագծի մասին ամփոփ տեղեկատվություն: Առավելագույնը՝ 1000 նիշ
1.6. Գտնվելու վայր(եր)ը	Մուտքագրե՛ք նախագծի իրականացման վայրը կամ վայրերը, եթե այն ավելի քան մեկ տարածք է ընդգրկում: Հնարավորության դեպքում նշե՛ք դրանց հասցեները կամ քարտեզում GPS տվյալները:

1.7. Ծրագրի նախագծի բաղադրիչները և դրանց արժեքները	Ծրագրի շրջանակը ներառում է մասնավորապես՝ հողատարածքը, շենքերի ձեռքբերումը, շինարարությունը և շինարարական ծախսերը, բոլոր սարքավորումները և կահույքը, ինչպես նաև ծրագրի կառավարումը, շինարարության վերահսկումը, աջակցությունը, տեխնիկական փաստաթղթերը, անհրաժեշտ թույլատրվական փաստաթղթերը, ուսուցումը և սեմինարները՝ ըստ կիրառելիության: Սպորտ բերված աղյուսակում ներկայացրե՛ք Ծրագրի բաղադրիչները և նշե՛ք յուրաքանչյուր բաղադրիչի ծախսերի գնահատականը: Ներկայացված բաղադրիչները պետք է համապատասխանեն 4.1-ին կետում նշվածներին:	
	Ծրագրի բաղադրիչները	Արժեքը հազար ՀՀ դրամով
	1.	
	2.	
	3.	
	4.	
	5.	
	6.	
	ԸՆԴԱՄԵՆԸ	
1.8. Ծրագրի տևողությունը 1.8.1. Ծրագիրը սկսելու ամսաթիվը՝ ամիս/տարի Ծրագիրը սկսելու ամսաթիվն է՝ ծրագրի նախագծի հաստատումից հետո գնումների հայտարարությունը հրապարակելու օրը: 1.8.2. Ծրագրի ավարտի ամսաթիվը՝ ամիս/տարի Ավարտական ակտի ստորագրման օրը. ծրագիրը մտնում է շահագործման փուլ, և սկսվում է ծառայությունների մատուցումը:		
1.9. Ո՞ր կազմակերպությունն է տնօրինելու ակտիվները Նշե՛ք նախագծի իրագործման արդյունքում ստեղծված/բարելավված ակտիվները տնօրինող կազմակերպության պաշտոնական անվանումը: Եթե այն դեռ հայտնի չէ (օրինակ՝ պետություն-մասնավոր գործընկերության դեպքում), անհրաժեշտ է մանրամասնել: Այս կետն ամփոփում է 4-րդ բաժնում ներկայացված տեղեկատվությունը:		
1.10. Ո՞ր կազմակերպությունն է շահագործելու ակտիվները Նշե՛ք նախագծի իրագործման արդյունքում ստեղծված ակտիվները շահագործող կազմակերպության պաշտոնական անվանումը: Եթե այն դեռ հայտնի չէ (օրինակ՝ պետություն-մասնավոր գործընկերության դեպքում), անհրաժեշտ է մանրամասնել: Այս կետն ամփոփում է 4-րդ բաժնում ներկայացված տեղեկատվությունը:		
1.11. Արդյո՞ք ծրագիրը նախատեսվում է ներկայացնել «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ կետով սահմանված կարգով ձևավորված և գործող ոլորտային կոմիտեում Դրական պատասխանի պարագայում նշե՛ք վարչապետի համապատասխան որոշումը:		

Բաժին 2. Նպատակ և հիմնավորում

2.1. Ի՞նչ հիմնական խնդիր է լուծում նախագիծը, ինչո՞ւ է այն անհրաժեշտ: Ներառե՞ք խնդրի մասշտաբների մասին հիմնական տեղեկատվությունը:

Ներկայացրե՛ք հիմնախնդիրը և դրանից բխող կոնկրետ խնդիրները (ըստ կիրառելիության), որոնք պետք է լուծի Ծրագիրը: Ներկայացրե՛ք Ծրագրի անհրաժեշտության հիմնավորումները և Ծրագրում ներդրումներ կատարելու պարճառները:

Առավելագույնը՝ 3000 նիշ

2.2. Որ՞ն է (որո՞նք են) առաջարկվող նախագծի նպատակը (նպատակները)

Նշե՛ք այն նպատակները, որոնց ձգտում է հասնել իրավասու մարմինն այս նախագծի միջոցով: Դրանք պետք է լուծում հանդիսանան ներկայացված խնդիրների համար: Պետք է լինի մեկ առաջնային նպատակ՝ ներկայացված ոչ ավելի, քան երկու կամ երեք նախադասությամբ և դրա հետք ածանցվող կոնկրետ նպատակները: Նպատակները պետք է լինեն կոնկրետ, չափելի, իրադրեական և սահմանված ժամկետով: Առավելագույնը՝ 3000 նիշ

2.3. Ի՞նչ տեղի կունենա, եթե նախագիծը չիրականացվի.

Համառոտ նկարագրե՛ք, թե ինչ կլինի, եթե նախագիծը չհաստատվի կամ չիրագործվի: Արդյո՞ք կառաջանան ուղղակի հետևանքներ: Արդյո՞ք հետևանքներ կլինեն միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: Եթե այո, ապա ներկայացրե՛ք դրանք: Շատ դեպքերում հետևանքների կարևորության աստիճանը փոքրեր է՝ «աննշան փոփոխությունից» մինչև «շարունակական մարդկային կորուստներ»: Առավելագույնը՝ 3000 նիշ

2.4. Թվարկե՛ք այն տարբերակները (տեխնիկական, կազմակերպչական և այլն), որոնք դիտարկվել են նպատակներին հասնելու համար: Բացատրե՛ք, թե ինչու է ընտրվել նախընտրելի տարբերակը:

Ներկայացրե՛ք այն հիմնական տեխնիկական, կազմակերպչական կամ ռազմավարական տարբերակները, որոնք դիտարկվել են ծրագրի նպատակներին և 2.1-ին կետում նշված խնդրի լուծմանը հասնելու համար:

Յուրաքանչյուր այլընտրանքային տարբերակի համար՝

- **Նկարագրե՛ք տարբերակը՝** ինչ միջոցներով է այն փորձում լուծել խնդիրը
- **Համեմատե՛ք այն ընտրված տարբերակի հետ՝** արդյունավետության, իրագործելիության, ծախսերի և կայունության տեսանկյունից
- **Մերժված տարբերակների դեպքում՝** նշե՛ք մեկ կամ երկու նախադասությամբ, թե ինչու է փվյալ տարբերակը մերժվել (օրինակ՝ չափից շատ ծախսաւար, տեխնիկապես անիրագործելի, սոցիալականորեն անընդունելի և այլն)

Առավելագույնը՝ 2000 նիշ

2.5. Ո՞րն է Ծրագրի սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Նկարագրենք ծրագրի հնարավոր ազդեցությունը մարդկանց կյանքի որակի և շրջակա միջավայրի վրա՝ դրական և բացասական կողմերով:

Խնդրում ենք անդրադառնալ հետևյալ ասպեկտներին՝

- Ինչպե՞ս է ծրագիրը նպաստում **աղքատության նվազեցմանը**: Արդյո՞ք այն ստեղծում է աշխատատեղեր, բարելավում եկամուտների հնարավորությունները կամ հասանելիությունը ծառայություններին:
- Ինչպե՞ս է ծրագիրը նպաստում **մարդկային կապիտալի զարգացմանը**: Օրինակ՝
 - Երեխաների առողջության և կյանքի պահպանման բարելավում
 - Դպրոցական կրթության հասանելիության կամ որակի բարձրացում
 - Շրջանավարտների և չափահաս շահառուների հմտությունների զարգացում
 - Կյանքի րևոլյուցիայի աճ
- Արդյո՞ք ծրագիրն ունի **շրջակա միջավայրի** վրա զգալի ազդեցություն (օրինակ՝ ջրային ռեսուրսների վրա ճնշում, հողօգտագործման փոփոխություն, աղբորոտում և այլն):

Առավելագույնը՝ 3000 նիշ

2.6. Որո՞նք են առաջարկվող ծրագրի օգուտները (դրական արտաքին ազդեցությունները):

Նշե՛ք նախագծի իրականացման հետևանքով առաջացող **բարենպաստ ազդեցությունները**՝ ուղղակի և անուղղակի, շահառուների և ընդհանուր հանրության համար:

Յուրաքանչյուր օգուտի դեպքում՝

- **Թվարկե՛ք առավելությունները**, որոնք կարելի է ակնկալել նախագծի իրականացման արդյունքում:
- Հնարավորության դեպքում՝ ներկայացրե՛ք **քանակական ցուցանիշներ**՝
 - **Ֆիզիկական չափման միավորներով** (օրինակ՝ սպասարկվող շահառուների թիվը, կրճատված սպասարկման ժամանակը)
 - **Դրամական արտահայտությամբ** (օրինակ՝ տնտեսված ծախսեր, եկամուտների աճ, ժամանակի մոնետիզացված արժեք)

Եթե որոշ օգուտներ չեն կարող հաշվարկվել քանակական տվյալներով, ապա դրանք պարզապես պետք է որակապես նկարագրվեն:

Օգուտները կարող են ներկայացվել հետևյալ երկու խմբերով.

- **Ուղղակի շահառուների համար**՝ այն անձինք կամ համայնքները, որոնք անմիջականորեն օգտվում են ծրագրից
- **Անուղղակի շահառուների կամ հանրային մակարդակում**՝ օրինակ՝ շրջակա միջավայրի բարելավում, տեղական տնտեսության ակտիվացում, միջգերատեսչական արդյունավետության աճ

Առավելագույնը՝ 2000 նիշ

2.7. Ուժե՞ր և քանի՞սն են ծրագրի շահառուները:

Ուժե՞ր կշահեն ծրագրից: Քանի՞ հոգի կշահի: Հնարավորության դեպքում տրամադրե՛ք ճշգրիտ վիճակագրական տվյալներ՝ համապատասխան աղբյուրներով: Նշե՛ք ծրագրով տրամադրվող ծառայություններից վերջնական օգտվողների թիվը: Նշե՛ք չափման միավորը (օրինակ՝ անհատներ, տնային տնտեսություններ, ձեռնարկություններ), տրամադրե՛ք նաև ծրագրի ապագա պահանջարկի գնահատականը: Առավելագույնը՝ 3000 նիշ

2.8. Որո՞նք են լինելու առաջարկվող ծրագրի բացասական արտաքին ազդեցությունները:

Բոլոր ծրագրերն առաջացնում են ինչպես դրական, այնպես էլ բացասական արտաքին ազդեցություններ: Շատ ծրագրերի բնորոշ են որոշակի բացասական ազդեցություններ, որոնցից ամենատարածվածներն են շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և մարդկանց տարհանումը՝ ծրագրի համար տարածք ազատելու նպատակով:

Առավելագույնը՝ 2000 նիշ

2.9. Նշե՛ք Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ զարգացման ծրագրերի կամ ծրագրի կամ ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի կամ ոլորտային ռազմավարությունների կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կամ խորհրդարանական մեծամասնության նախընտրական ծրագրի կամ անհատական նախաձեռնությունների և/կամ օրենսդրական պահանջների ո՞ր կետին (բաժնին) է համապատասխանում նկարագրված նախագիծը և մեջբերե՛ք համապատասխան հատվածը. <i>Ինչպե՞ս է ծրագիրը համապատասխանում նշված ռազմավարություններին: Ներկայացրե՛ք հակիրճ հիմնավորում: Առավելագույնը՝ 3000 նիշ</i>	
2.10. Արդյո՞ք նախագիծը նպաստում է «Կայուն զարգացման նպատակների» (ԿՁՆ) որևէ մեկի իրագործմանը: <i>Եթե այո՛, ապա անհրաժեշտ է նշել կոնկրետ Կայուն զարգացման նպատակը (1-17) և համառոտ բացատրել, թե ինչպես է Ծրագիրը նպաստելու դրա իրագործմանը: Առավելագույնը՝ 2000 նիշ</i>	
2.11. Արդյո՞ք ծրագրի իրականացումը կնպաստի Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացմանը: <i>Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացումը ներառում է այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված են ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը, ինչպես օրինակ՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացումը, ինչպես նաև վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառումը: Նախագծի շրջանակում անհրաժեշտ է գնահատել՝ արդյո՞ք դրա իրականացումը կբերի ջերմոցային գազերի արտանետումների աճի, թե կնպաստի դրանց նվազեցմանը: Հակիրճ հիմնավորե՛ք պատասխանը: Հնարավորության դեպքում՝ տնտեսական զուտ ներկա արժեքի հաշվարկի մեջ ներառե՛ք CO2-ի նվազեցումը կամ ավելացումը: Առավելագույնը՝ 2000 նիշ</i>	
2.12. Արդյո՞ք ծրագրի իրականացումը կնպաստի Հայաստանի Հանրապետության՝ Կլիմայի փոփոխության հարմարվողականության բարձրացմանը: <i>Նկարագրեք, թե ինչպես ծրագիրը կօգնի նվազեցնել կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունները: Օրինակ՝</i> • Արդյո՞ք այն բարելավում է ջրի հասանելիությունը, մաքրակարարումը կամ պահեստավորումը • Արդյո՞ք այն բարձրացնում է ենթակառուցվածքների կայունությունը՝ ջրհեղեղների, երաշտի, սողանքների և այլ ռիսկերին դիմակայելու համար • Արդյո՞ք ծրագիրը նախատեսում է կլիմայի փոփոխությունների հարմարվողականության ավելացում գյուղատնտեսության, առողջապահության կամ բնակարանային պայմանների ոլորտներում <i>Առավելագույնը՝ 2000 նիշ</i>	

2.13. Արդյո՞ք ծրագիրը նպաստում է բնական կամ տեխնաժին աղետների ռիսկերի կանխարգելմանը կամ նվազեցմանը:

- Արդյո՞ք ծրագիրը նպաստում է բնական կամ տեխնաժին աղետների ռիսկի նվազեցմանը կամ ազդեցության թուլացմանը:
- Արդյո՞ք ծրագիրը նախատեսվում է իրականացնել բարձր աղետների ռիսկեր ունեցող գոտիներում:
– Եթե այո՝ ծրագրի նախագծման մեջ ընդգրկվել են արդյո՞ք ռիսկերին դիմակայելու միջոցառումներ:
- Արդյո՞ք ծրագիրն ուժեղացնում է աղետների պատրաստվածության, վաղ նախազգուշացման կամ արձագանքման կարողությունները:
- Արդյո՞ք ծրագրի նախապատրաստման ընթացքում իրականացվել է աղետների ռիսկերի գնահատում:

Բաժին 3. Ֆինանսական տեղեկատվություն

3.1. Ծրագրի իրականացման համար գնահատված ընդհանուր ծախսը.

Ներկայացրեք ծրագրի իրականացման համար անհրաժեշտ **բոլոր ծախսերը**¹ սկսած նախնական փուլերից մինչև ավարտական աշխատանքները:

Մասնավորապես՝

- **Շինարարությանը նախորդող ծախսերը**, ինչպիսիք են՝ տեխնիկական տնտեսական ուսումնասիրություններ, նախագծում, հողի օգտագործում, փոխհատուցում, փարաբնակեցում
- **Շինարարական ծախսերը**, ներառյալ նյութեր, սարքավորումներ, աշխատանքներ
- **Ծառայությունների գծով ծախսերը**, օրինակ՝ խորհրդատուների ներգրավում, շինարարության վերահսկում
- **Ծրագրի կառավարման և աջակցության ծախսերը**, ներառյալ վերապատրաստումներ, սեմինարներ և թույլտվությունների ստացում:

Ծախսերը պետք է գնահատվեն **իրավասու մարմնի կամ մասնագետների կողմից**, իսկ դրա աղբյուրը (գնահատման հիմքը) պետք է նշվի փաստաթղթում կամ կցվի որպես հավելված (օրինակ՝ նմանափայլ ծրագրերի գնահատումներ, նախահաշիվներ կամ ոլորտային ուղեցույցներ):

Ծրագրի ընդհանուր արժեքը ներկայացվում է 1.7-րդ կետի «Ընդամենը» տողում:

3.2. Ծրագրի ծախսերի բաշխումն ըստ տարիների

(ընդհանուրը պետք է հավասար լինի վերը նշված գումարներին)

Բյուջետային ֆինանսական տարի	1 (20...)	2 (20...)	3 (20...)	4 (20...)	Հետագա տարիներ (n)
Պահանջվող գումարը հազար ՀՀ դրամով					
Մեկնաբանություններ					

3.3. Ֆինանսավորման աղբյուրները

Ստորև բերված աղյուսակում մուտքագրե՛ք ծրագրի ֆինանսավորման բոլոր աղբյուրները՝ ներկայացնելով գումարը հազար ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, ինչպես նաև որպես ծրագրի ընդհանուր ծախսերի տոկոս:

Ֆինանսավորման աղբյուր	Գումար (հազար ՀՀ դրամ)
Պետական բյուջե	
Արտաքին վարկ	
Արտաքին դրամաշնորհ ¹	

¹ Մինչև արտաքին ֆինանսավորում նախատեսող նախագիծ (ներդրումային ծրագրի հայտ) ներկայացնելը, ներառյալ վարկավորումը և դրամաշնորհը, անհրաժեշտ է ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության համաձայնությունը:

Ներքին փոխառություն		
Վաճառքից եկամուտ		
Տուրքեր և վճարներ		
Այլ (նշել)...		
Ընդամենը		
3.3.1. Դոնորների ֆինանսավորում Նշե՛ք բոլոր հնարավոր դոնորներին, որոնք կատարում կամ պատրաստվում են կատարել ներդրումներ ծրագրում՝ ներկայացնելով, թե ինչի հիման վրա է արվել ենթադրությունը (օրինակ՝ քննարկում, մրադրությունների նամակ և այլն): Հնարավորության դեպքում տրամադրե՛ք նախնական պայմանավորվածությունների ապացույց:		
3.4.1. Ծրագրի տարեկան գործառնական ծախսերը (հազար ՀՀ դրամ) Ծրագրի գործողության ընթացքում անհրաժեշտ գործառնական (շահագործման և պահպանման) ծախսերը գնահատվում և արտահայտվում են տարեկան կտրվածքով, հազար ՀՀ դրամով: Այս ցուցանիշը ներառում է աշխատավարձերը, կոմունալ ծառայությունները, պահպանման, մատակարարումների և նյութերի գծով ծախսերը և այլն: Ներկայացվում է գնահատումների աղբյուրը կամ հիմքը, ընդ որում անհրաժեշտության դեպքում այն կարող է կցվել որպես առանձին փաստաթուղթ: Եթե առաջին գործառնական տարին ոչ լրիվ տարի է, ապա այդ տարվա ոչ ամբողջական ծախսերը ներառվում են հաջորդ երկու լրիվ տարիների գնահատականներում:		
1-ին գործառնական տարի (2_ _ _)	2-րդ տարի (2_ _ _)	3-րդ տարի (2_ _ _)
3.4.2. Դրանց ո՞ր մասն է ծածկվելու արդեն իսկ առկա բյուջետային ծրագրի միջոցներից: Որոշ նախագծեր նախատեսում են արդեն իսկ գործող ծրագրի փոխարինում, ինչը նշանակում է, որ նոր ծրագրի համար հասանելի է նախորդ ծրագրի բյուջեն: Նման դեպքում, ներկայացրե՛ք բյուջետային ծրագրի և միջոցառման դասիչը և գործող ՄԺԾՄ ում արտացոլված գումարը: Եթե ծրագիրը լիովին նոր է և նախորդ ծրագրի բյուջե չկա, ապա մուտքագրե՛ք «0»:		
1-ին գործառնական տարի (2_ _ _)	2-րդ տարի (2_ _ _)	3-րդ տարի (2_ _ _)
3.4.3. Նոր/լրացուցիչ գործառնական ծախսեր Ցույց է տրվում նախորդ ծրագրի բյուջեով պայմանավորված նախագծի իրականացման համար լրացուցիչ բեռը կամ խնայողությունը (3.4.2 կետից հանած 3.4.1. կետից): Ներկայացվում է հազար ՀՀ դրամով:		
1-ին գործառնական տարի (2_ _ _)	2-րդ տարի (2_ _ _)	3-րդ տարի (2_ _ _)
3.5. Լրացուցիչ գործառնական և պահպանման ծախսերի աղբյուրները Նշվում է, թե ինչպես են ֆինանսավորվելու լրացուցիչ գործառնական ծախսերը: Դրանք ընդգրկում են «Նոր գործառնական ծախսեր» տողում (հաշվարկված 3.4.3-ում) նշված ծախսերը: Գործառնական ծախսերի ֆինանսավորման համար մի քանի աղբյուրի առկայության դեպքում նշե՛ք դրանց մասնաբաժինը:		

3.6. Արդյո՞ք պահանջվում է հողի օտարում (ԱՅՈ/ՈՉ)

--	--

Նշե՛ք «Այո» կամ «Ոչ»: Եթե «Այո», ապա գումարն արդեն պետք է ներառված լինի 3.1-ին և 3.2-րդ կետերի ընդհանուր գումարում, իսկ այսպետե՛լ այն պետք է ներկայացվի առանձին: Նախագծի իրականացման համար հողի օտարման անհրաժեշտության դեպքում այդ մասին այսպետե՛լ հստակ նշում է կատարվում, ինչպես նաև նշվում է հողի օտարման ընդհանուր գինը՝ ներառյալ բոլոր փոխհատուցումները և իրավաբանական ծախսերը:

3.7. Արդյո՞ք ծրագիրը կստեղծի եկամուտ: (Այո/Ոչ)

Եթե «Այո», ներկայացրե՛ք գնահատված եկամուտը, դրա աղբյուրները և ծրագրի կանխատեսվող շահութաբերության ներքին դրույքը.

Պատասխանե՛ք «Այո» կամ «Ոչ»: Եթե պատասխանը «Ոչ» է, անցե՛ք հաջորդ բաժին:

Եթե պատասխանը «Այո» է, ինչը նշանակում է, որ ակնկալվում են եկամուտներ (օրինակ՝ օգտագործման դիմաց վճար), դրանք գնահատվում և ներկայացվում են տարեկան կտրվածքով՝ հազար ՀՀ դրամով, համաձայն ստորև բերված աղյուսակի:

Եթե առաջին գործառնական տարին ոչ լրիվ տարի է, ապա այդ տարվա ոչ ամբողջական ծախսերը ներառվում են հաջորդ երկու լրիվ տարիների գնահատականներում:

1-ին գործառնական տարի (2_ _ _)	2-րդ տարի (2_ _ _)	3-րդ տարի (2_ _ _)

3.7.1. Այն դեպքում, եթե ծրագիրն ունի կանխատեսվող եկամուտներ, ապա ներկայացվում է դրա ֆինանսական կենսունակությունը

Մասնավորապես՝ պետք է հաշվարկվեն.

- Շահութաբերության ներքին դրույքաչափ (ՇՆԴ / IRR)
Ցուցադրում է այն տոկոսադրույքը, որի դեպքում ծրագրի ընդհանուր եկամուտները հավասարվում են ծախսերին:
Եթե ՇՆԴ-ը բարձր է, նշանակում է՝ ծրագիրը կարող է լինել ֆինանսապես գրավիչ և ինքնաբավ:
- Զուր ներկա արժեք (ԶՆԱ / NPV)
Հաշվարկվում է՝ եկամուտների և ծախսերի ներկա արժեքների տարբերությունը:
ԶՆԱ-ն պետք է լինի դրական, որպեսզի ծրագիրն ընկալվի որպես ֆինանսապես արդյունավետ:

Նշում. Այս ցուցանիշները կիրառելի են միայն այն ծրագրերի դեպքում, որոնք ունեն եկամուտներ կամ փոխհատուցման մեխանիզմներ: Ոչ եկամտաբեր, հանրային կամ սոցիալական ծրագրերի դեպքում, ֆինանսական կենսունակության այս հաշվարկները պարտադիր չեն, և շեշտը պետք է լինի տնտեսական նպատակահարմարության վրա (բաժին 3.9 ՇՆԴ, EIRR):

Հաշվարկները նույնպես կցվում են նախագծին՝ որպես հավելված (.xlsx file):

3.8. Եկամուտի աղբյուրները.

Նշե՛ք ակնկալվող եկամուտի աղբյուրը:

Պատասխանը պետք է համապատասխանի 3. 7-րդ բաժնում ներկայացված տեղեկությանը:

3.9. Նշե՛ք ծրագրի կանխատեսվող տնտեսական շահութաբերության ներքին դրույքը (ՏՇՆԴ).

ՏՇՆԴ-ը նախագծի փնտեսական արդյունավետության հիմնական ցուցանիշն է: Այն փոկոսադրույքն է, որի դեպքում նախագծի մաքուր փնտեսական օգուտները հավասարվում են ծախսերին: ՏՇՆԴ հաշվարկում է՝

- Բոլոր հանրային օգուտները (բաժիններ 2.6, 2.10, 2.11, 2.12, 2.13),
- Ուղղակի (բաժին 3.1) և անուղղակի ծախսերը (բաժին 2.8)

Հաշվարկները նույնպես կցվում են նախագծին՝ որպես հավելված (.xlsx file):

4. Ծրագրի նախագծի իրականացման պլանը և ռիսկերի վերլուծությունը**4"1. Ներկայացրե՛ք ծրագրի իրականացման ժամանակացույցը.**

Թվարկե՛ք Ծրագրի իրականացման կարևոր բաղադրիչները սպորտ բերված աղյուսակում (պեղք է համապատասխանի 1.7-րդ կետի աղյուսակին)

Բաղադրիչ	Սկիզբ (ա/տ)	Ավարտ (ա/տ)
Ծրագիրը սկսում է գործել / Ծրագրի մեկնարկ		

4.2. Ներկայացրե՛ք ծրագրի իրականացման և գործարկման կազմակերպչական միջոցառումները.

Պատասխանում նշվում է, թե ինչպես է կառավարվելու Ծրագիրն իրականացման ընթացքում: Ներկայացվում է նաև, թե արդյոք ծրագրի կառավարումն իրականացվելու է սեփական կառույցների միջոցով, թե արտապատվիրակվելու է: Նշե՛ք այն անձանց, ովքեր պատասխանատու են իրականացման ընթացքում հիմնական խնդիրների լուծման համար՝ փողեկավարություն տրամադրելով նրանց աշխատանքային փորձի մասին: Նույնը վերաբերում է նաև շահագործման փուլին՝ նշե՛ք ծրագրի գույքի շահագործման համար պատասխանատու մարմինը/գերատեսչությունը: Եթե կարծում եք, որ ծրագրի իրականացման համար ցանկալի ձևը ՊՄԳ-ն է, հիմնավորե՛ք դա այսպես: Առավելագույնը՝ 2000 նիշ

4.3. Նմանատիպ ծրագրեր իրականացնելու հարցում իրավասու մարմնի նախկին փորձը:

Իրավասու մարմինը պետք է թվարկի նմանատիպ ծրագրերը (ծրագրի անվանումը, չափը և կարճ նկարագրությունը), որոնք հաջողությամբ իրականացրել է նախորդ 5 տարիների ընթացքում: Եթե նախկինում նման փորձ չի եղել, կամ առաջարկվող ծրագիրը պարունակում է նորարարության զգալի չափաբաժին, ապա իրականացման փնտեսականից այն կդիմի որպես ռիսկային: Այդ դեպքում իրավասու մարմինը պետք է նկարագրի այն միջոցառումները (օրինակ՝ մասնագետների համալրում, խորհրդատուների հետ պայմանագրերի կնքում կամ ծրագիրը ՊՄԳ ձևաչափով իրականացում), որոնք կնպաստեն ծրագրի հաջող իրականացմանը:

Առավելագույնը՝ 2000 նիշ

4.3 Արդյո՞ք նախկինում նման ծրագրեր Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են:

Պատասխանը կարող է լինել «Այո» կամ «Ոչ», «Այո»-ի դեպքում ներկայացրե՛ք համապատասխան փորձը, իսկ «Ոչ»-ի դեպքում՝ լրացուցիչ միջոցները, որոնք կձեռնարկվեն ռիսկերը նվազեցնելու համար: Նախկինում հաջողությամբ չիրականացված ծրագրերը միշտ լրացուցիչ ռիսկ են հանդիսանում: Այս հարցի նպատակն է համոզվել.

ա) արդյո՞ք նախկինում նման ծրագրերի իրականացման միջանկյալ և վերջնական արդյունքները բավարար են եղել, և որ ամենակարևորն է՝ ի՞նչ դասեր են քաղվել, որոնք կարելի է հաշվի առնել և կիրառել սրվյալ ծրագրում:

բ) եթե նախկինում նման ծրագրեր չեն իրականացվել, ապա ի՞նչ քայլեր են նախատեսվում ժամանակի և բյուջեպային միջոցների առումով հնարավոր դիսկերը նվազեցնելու համար:

Առավելագույնը 1000 նիշ

4.4. Թվարկե՛ք ծրագրի շահագրգիռ կողմերին և նշե՛ք, թե արդյոք նրանց հետ խորհրդակցել եք

Շահագրգիռ կողմերը ծրագրի շահառուներն են: Դրանք կարող են դրական կամ բացասական մոտեցում ունենալ ծրագրի գաղափարի նկատմամբ: Դրանք անձինք կամ հաստատություններ են, որոնք շահագրգռված են Ծրագրի արդյունքներով կամ ծրագրի ազդակիրներն են: Թվարկե՛ք դրանք այսպեղ:

Առավելագույնը 3000 նիշ

4.5. Թվարկե՛ք ծրագրի հաջող իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը (ի՞նչը կարող է սխալ ընթանալ) և յուրաքանչյուր ռիսկի համար ներկայացրե՛ք մեղմացման/չեզոքացման միջոցներ:

Ծրագրերի նախապատրաստման և գործնական իրականացման ընթացքում բազմաթիվ գործողություններ կամ պայմաններ կարող են սխալ ընթացք ունենալ, ինչը սովորաբար հանգեցնում է ծրագրի իրականացման ուշացումների, լրացուցիչ ծախսերի կամ նույնիսկ նպատակների չիրականացման: Ուստի անհրաժեշտ է նախագծման փուլում հստակ հատկորոշել ու նկարագրել բոլոր էական ռիսկերն, որոնք կարող են խաթարել ծրագրի հաջող իրականացումը:

Յուրաքանչյուր դիսկի համար անհրաժեշտ է՝

գնահատել հավանականությունը՝ սանդղակով 1-ից 3 (որտեղ 1-ը՝ ցածր, 3-ը՝ բարձր)

գնահատել ազդեցության մակարդակը ծրագրի վրա՝ սանդղակով 1-ից 3

Ներկայացնել ռիսկի նվազեցման կամ մեղմման առաջարկվող մեխանիզմները

Ռիսկերը, որոնք պետք է հաշվի առնել, ներառում են՝ իրավական, գնումների գործընթացի ռիսկը, տեխնիկական, ինժեներական և նորարարական ռիսկը, կառավարման ռիսկը, փոխարժեքի փոփոխության ռիսկը և այլ ռիսկեր, որոնք կարող են ծրագրի վրա ազդել:

[illegible]

Բաժին 5. Կոնտակտային տվյալները և նախագծի հաստատումը		
	Անուն, ազգանուն	Ստորագրություն
Նախագծի հեղինակ		
Հեռախոս		
Էլ. փոստ		
Վարչության պետ կամ ծրագրի համար պատասխանատու այլ անձ (անուն և ստորագրություն)		
Նախագիծն առաջարկող մարմնի վերադաս (անուն և ստորագրություն)		

**ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ
ԵՎ ՏԵԽՆԻԿԱՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ
ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Բաժին	Նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում	Տեխնիկատնտեսական վերլուծություն
Ծրագրի շրջանակ, այլընտրանքներ	Ծրագրի ընդհանուր նկարագիրը, շրջանակը, նպատակները, պահանջվող ենթակառուցվածքները և ծառայությունները, նպատակներին հասնելու հնարավոր այլընտրանքները	Ծրագրի մանրամասն նկարագրություն, ներառյալ տեղանքը, դիզայնի ամփոփ նկարագիրը, շրջանակը
Նախագիծ	Ծրագրի նախագիծը, որը հանդիսանում է տվյալ ոլորտի համար սովորաբար կիրառելի ընդհանրական նախագիծ՝ ծրագրի իրականացման վայրին բնորոշ առանձնահատկություններով:	Հաշվի են առնվում շինարարական տեղամասի, տարածքի ինժեներաերկրաբանական, գոյություն ունեցող շենքերի, շինությունների և կառուցվածքների փաստացի տեխնիկական վիճակի հետազննության հետ կապված ինժեներատեխնիկական և նախագծանախահաշվային աշխատանքների արդյունքները.
Շրջակա միջավայրի վրա ազդեցություն	Ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ ներառյալ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա հնարավոր բացասական ազդեցությունը.	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն հնարավոր ծրագրի նախագծի ռազմավարական գնահատումն ու փորձաքննության անցկացումը, որը ներառում է նախքան շինարարությունը շինարարության և դրան հաջորդող փուլերի բնապահպանական խնդիրների վերհանումը, դրանց ազդեցության գնահատումը և անհրաժեշտության դեպքում մեղմացման միջոցառումների մշակումը, այդ թվում՝ դրանց առնչվող ծախսերի գնահատումը.

Սոցիալական ազդեցություն	Ծրագրի սոցիալական ազդեցությունը, ներառյալ՝ հողի և վերաբնակեցման անհրաժեշտության վերլուծությունը՝ սահմանափակված հողի ձեռքբերման և վերաբնակեցման հետ կապված և ծրագրի իրականացմանը խոչընդոտող կամ լրացուցիչ ծախսեր առաջացնող խնդիրների վերհանմամբ, ծրագրի՝ գենդերային, համայնքների, տեղական զբաղվածության վրա ազդեցության վերլուծությունը՝ սահմանափակված ծրագրի իրականացման էական խնդիրներին անդրադարձով.	Ծրագրի սոցիալական ազդեցությունը, ներառյալ՝ - հողամասերի և վերաբնակեցման անհրաժեշտության վերլուծությունը՝ հիմք ընդունելով հողամասերի սեփականության իրավունքի ձեռքբերման գծով անհրաժեշտ և նախատեսվող ծախսերը, ինչպես նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ընթացակարգերի կիրառման ծախսերը և ժամկետները. - ծրագրի՝ ժողովրդագրական, տեղական համայնքների, տեղական զբաղվածության վրա ազդեցության ամբողջական վերլուծություն.
Տնտեսական ազդեցություն	Ծրագրի տնտեսական ազդեցությունը, որը ծրագրի գործողության ողջ ժամանակահատվածում հասարակության համար դրա ընդհանուր տնտեսական ծախսերի և օգուտների գնահատումն է: Ծրագրի տնտեսական ազդեցության ուսումնասիրությունը ներառում է նախնական ՏՀՆԴ-ի հաշվարկման և դրա բազային դրույքի հետ համադրման միջոցով որոշվող ծրագրի տնտեսական կենսունակության գնահատումը, ֆիզիկական ենթակառուցվածքների և շահագործման գծով ծախսերը՝ հաշվարկված՝ ըստ մոտավոր արժեքների, սոցիալական ծախսերը և օգուտները՝ ըստ շահառուների մոտավոր թվով հաշվարկված ազգային միջին արժեքների.	Ծրագրի տնտեսական ազդեցությունը, որը ծրագրի գործողության ողջ ժամանակահատվածում հասարակության համար դրա ընդհանուր տնտեսական ծախսերի և օգուտների գնահատումն է: Սոցիալական ծախսերը և օգուտները՝ ըստ շահառուների ճշգրիտ թվով հաշվարկված ազգային կամ տարածաշրջանային միջին արժեքների.

Կապիտալ ծախսեր	Ծրագրի ծախսերը գնահատվում են՝ հիմք ընդունելով ծրագրի ընդհանրական նախագիծը և դրանց առկայության դեպքում հնարավոր առանձնահատկությունները. Ծրագրի հետ կապված շինարարության, սարքավորումների և անհրաժեշտ հողամասերի գծով ծախսերի մոտարկված գնահատում՝ մոտավոր քանակների և ուղենիշային ծախսերի կիրառությամբ - +/-30% - 50% ճշգրտություն	Ծրագրի տեխնիկական գնահատումը և կապիտալ ծախսերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով կառուցվող ենթակառուցվածքների ֆիզիկական բնութագրերի կամ առկա ենթակառուցվածքների ամբողջական ուսումնասիրությունը. նախագծահաշվային փաստաթղթեր սարքավորումների մատակարարների գնային առաջարկներ - +/-10% -15% ճշգրտություն
Շահագործման և պահպանման ծախսեր	Շահագործման, պահպանման, վարչական, ծառայությունների մատուցման ծախսերի նախնական գնահատականներ՝ հիմնված են համանման ծրագրերի ծախսերի, աշխատակիցների թվի ենթադրությունների վրա	- Շահագործման ծախսերի ամբողջական գնահատում - Հաստիքացուցակ - Պահպանման ծախսեր, կոմունալ ծախսեր - Չնախատեսված ծախսերի ենթադրություններ
Կատարողական չափանիշներ		Սահմանվում են ենթակառուցվածքի տեխնիկական կատարողական նվազագույն ստանդարտները և ցուցանիշները.
Իրավական և կարգավորող շրջանակ	- կիրառելի իրավական շրջանակի նկարագրություն - անհրաժեշտ թույլտվությունների և լիցենզիաների ամփոփ նկարագիր - հնարավոր իրավական խոչընդոտների հատկորոշում	- ընդլայնված իրավական պատշաճ ուսումնասիրություն (due diligence) - իրավական ռիսկերի գնահատում - ենթակապալառուների հետ հնարավոր պայմանագրային շրջանակի նկարագրություն

Ինստիտուցիոնալ լուծում	- ծրագրի իրականացման ինստիտուցիոնալ լուծումների ամփոփ նկարագրություն - դերերի և պարտավորությունների ընդհանրական բաշխում - կարողությունների բացերի դուրս բերում	- մանրամասն ինստիտուցիոնալ վերլուծություն - կառավարման կառուցվածք - կարողությունների բաշխում, առկա բացերի լրացման եղանակների նկարագրություն
Հողամասեր	Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հողամասերի գծով ծախսերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հողամասի մակերեսը և համադրելի տեղեկությամբ/ տվյալներով ստացված արժեքները.	Հողամասերի անհրաժեշտությունը և առկայությունը՝ հիմք ընդունելով կարիքների ամբողջական գնահատումը, հողամասերի ձեռքբերման ծրագիրը և ծախսերի համապատասխանությունը շուկայական գներին.
Պահանջարկ	Վերջնական սպառողների կողմից հնարավոր պահանջարկը և դրա կարողությունը՝ նպաստելու հնարավոր ծրագրի տնտեսական և ֆինանսական իրագործելիությանը, որում՝ - մակրո մակարդակով շուկայի գնահատում - հասանելի տվյալների վրա պահանջարկի և դրա աճի կանխատեսում - առկայության դեպքում համանման ծրագրերի բեռնարքինգ - պահանջարկի վրա ազդող հիմնական գործոնների նկարագրություն - պահանջարկի աճի գնահատումը հիմնվում է նմանատիպ ենթակառուցվածքների մասով ընդհանուր միջին արժեքների վրա	Վերջնական սպառողների կողմից հնարավոր պահանջարկը (այդ թվում՝ ծրագրի պահանջարկի վերաբերյալ առաջնային հարցումները) և դրա կարողությունը՝ նպաստելու ծրագրի տնտեսական և ֆինանսական իրագործելիությանը, որում՝ - շուկայի ամբողջական տվյալներ առաջնային աղբյուրներից - պահանջարկի սեզմնետավորում (ըստ տեսակի, աշխարհագրական, սեզոնային և այլ) - պահանջարկի կանխատեսման մի քանի սցենարներ և զգայունության վերլուծություն

Ռիսկեր	Ծրագրի ռիսկերի վերլուծությունը հիմնվում է ծրագրի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման պահին առկա ամբողջ տեղեկատվության վրա	Ծրագրի ռիսկերի վերլուծությունը, ինչն ընդգրկում է տեխնիկատնտեսական ուսումնասիրության բոլոր բաժիններում ներկայացված ռիսկերի լիարժեք վերլուծությունների հիման վրա ռիսկերի հստակ նկարագրությունը, դրանց կառավարման մոտեցումները.
Ծրագրի ֆինանսական վերլուծություն	Ծրագրի իրականացման ֆինանսական կենսունակության վերլուծություն՝ հնարավոր եկամուտների և ծախսերի նկարագրություն	Ծրագրի եկամուտների և ծախսերի, ֆինանսավորման աղբյուրների մանրամասն վերլուծություն:
Հնարավոր խոչընդոտներ	Հնարավոր խնդիրները, որոնք կարող են խոչընդոտել ծրագրի իրականացմանը, այդ թվում՝ էական բնապահպանական խնդիրները, պատմական գտածոների հետ կապված խնդիրները, համայնքի էական դիմադրությունը, լիազոր մարմնի կողմից վերհանվող հարկաբյուջետային ու ֆիսկալ կայունության ապահովման խնդիրները և այլն.	
Ժամանակացույց	Իրագործման նախնական ժամանակացույց	- Մանրամասն իրագործման ժամանակացույց - Ծրագրի առանցքային կատարողական փուլերը - Գնումների ռազմավարություն և պլան

ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԴԱՇՏԵՐԻ ՑԱՆԿԸ

Բաժին 1. Ծրագրի նույնականացում և հիմնական տվյալներ

1. Ծրագրի նույնականացման համար
2. Ծրագրի անվանումը
3. Ծրագրի նպատակն ու հիմնավորումը
4. Ծրագրի տեսակը (վարկային, դրամաշնորհային, բյուջետային, ՊՄԳ և այլն)
5. Իրավասու մարմինը
6. Ծրագրի իրականացման ոլորտը (տրանսպորտ, էներգետիկա, առողջապահություն, կրթություն և այլն)
7. Ծրագրի իրականացման ենթաոլորտը (օրինակ՝ ավտոճանապարհներ, վերականգնվող էներգիա և այլն)
8. Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք, հասցե)
9. Ծրագրի կարգավիճակը (նախապատրաստման փուլ, իրականացվող, ավարտված, կասեցված և այլն)

Բաժին 2. Ժամկետներ և փուլեր

10. Ծրագրի ներդրումային կոմիտեում քննարկումների ամսաթիվը (ամսաթվերը)
11. Ծրագրի մեկնարկի ամսաթիվը
12. Ծրագրի ավարտի ամսաթիվը
13. Կապալառուի (Մասնավոր գործընկերոջ) ընտրության հայտարարության ամսաթիվը
14. Շահագործման մեկնարկի ամսաթիվը

Բաժին 3. Ֆինանսական տվյալներ

15. Ծրագրի ընդհանուր բյուջեն
16. Ծրագրով նախատեսված կապիտալ ծախսերը (հազ ՀՀ դրամով)
17. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները (պետական բյուջե, վարկ, դրամաշնորհ, մասնավոր ներդրում և այլն)
18. Ֆինանսավորման պայմանները (տոկոսադրույք, ժամկետներ, արտոնյալ շրջան և այլն)
19. Իրականացման փուլում փաստացի կատարված կապիտալ ծախսերը
20. Տրամադրված պետական աջակցության չափը
21. Պետական աջակցության տեսակները և դրանց չափերը

Բաժին 4. Ծրագրի բովանդակային նկարագիր

22. Ծրագրի մանրամասն նկարագրությունը (ներառյալ՝ նպատակները, հիմնավորումը, սոցիալ-տնտեսական նշանակությունը)
23. Ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումները
24. Պլան-ժամանակացույցը
25. Ծրագրի իրականացման եղանակը (ինքնուրույն իրականացում, ՊՄԳ, համաֆինանսավորում և այլն)

Բաժին 5. Կատարողականի ցուցանիշներ (Performance Indicators)

26. Ակնկալվող արդյունքները (օրինակ՝ կառուցված ճանապարհ, ստեղծված աշխատատեղեր և այլն)
27. Հիմնական ցուցանիշներ (KPI)՝ բազային արժեք, թիրախային արժեք, փաստացի կատարում
28. Ծառայության մատուցման հիմնական չափորոշիչները (որակի, հասանելիության և արդյունավետության պահանջներ)

Բաժին 5. Գնումներ

29. Գնումների եղանակը (ՊՄԳ, բաց մրցույթ, երկփուլ մրցույթ և այլն)
30. Գնումների փաստաթղթերի փաթեթի հղումը

Բաժին 6. Կատարման և վերահսկման տվյալներ

31. Տեղեկատվություն ծրագրի ընթացիկ վիճակի մասին (պարբերական զեկույցներ, առկա խնդիրներ)
32. Եզրափակիչ գնահատման արդյունքներ

Բաժին 7. Հանրային հաղորդակցում և թափանցիկություն

33. Ծրագրի վերաբերյալ հանրային քննարկումների (լսումների) անցկացում (ամսաթվեր, ձևաչափ, արձանագրություններ)
34. Հասարակությանը տրամադրված տեղեկություններ (բաց տվյալներ, հրապարակված փաստաթղթեր)

Բաժին 8. Տեղեկատվության լրացուցիչ դաշտեր

35. Ծրագրի կապը ՀՀ ռազմավարությունների, կառավարության ծրագրի, համապետական կամ այլ ծրագրերի և միջազգային պարտավորությունների հետ
36. Ծրագրի կապը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների (SDGs) հետ
37. Ծրագրի փաստաթղթերի ամբողջական փաթեթի հղումը (պայմանագիր, տեխնիկական առաջադրանք, գնահատականներ)
38. Այլ անհրաժեշտ տեղեկատվություն

ԾՐԱԳՐԻ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ

I. Ծրագրի ընդհանուր տեղեկություն

Դաշտ	Պատասխան
Ծրագրի անվանում	
Ներկայացնող մարմին	
Իրականացնող մարմին/կազմակերպություն	
Գտնվելու վայրը	
Ծրագրի համառոտ նկարագիր, 3-4 նախադասություն	

II. Ֆինանսավորում (Եթե առկա է գրանտային կամ վարկային կոմպոնենտ)

Դաշտ	Պատասխան
Նախնական արժեք (մլն դրամ)	
Ֆինանսավորման աղբյուրները ըստ մասնաբաժնի (Պետբյուջե / Վարկ / Դոնոր / Այլ)	
Վարկային համաձայնագրի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն և հղումներ	

III. Նախագծման փուլ

Դաշտ	Արդյո՞ք պահանջվում է (այո/ոչ)	Կարգավիճակը (Առկա է / Ընթացքում է / Չսկսված)	(Սպասվող) Ավարտի ամսաթիվը
Նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրություն			
Տեխնիկատնտեսական հիմնավորում			
ՇՄԱԳ / Շրջակա միջավայրի գնահատում			
Ճարտարապետաշինարարական նախագիծ			

IV. Հողային և սեփականության կարգավիճակ

Դաշտ	Արդյո՞ք պահանջվում է (այո/ոչ)	Կարգավիճակը (Առկա է / Ընթացքում է / Չսկսված)	(Սպասվող) Ավարտի ամսաթիվը
Հողի հասանելիություն (Եթե մի քանիսն են, ապա նշել առանձին տողերով)			
Սեփականության կարգավիճակ (Պետական / Համայնքային / Մասնավոր)			

Հանրային գերակա շահ ճանաչելու անհրաժեշտություն (մանրամասներ)			
Հողի նշանակությունը փոխելու անհրաժեշտություն (մանրամասներ)			

V. Թույլտվություններ և արտոնագրեր

Դաշտ	Արդյո՞ք պահանջվում է (այո/ոչ)	Կարգավիճակը (Առկա է / Ընթացքում է / Չսկսված)	(Սպասվող) Ավարտի ամսաթիվը
Շինթույլտվություն			
Այլ անհրաժեշտ թույլտվություններ /լիցենզիաներ/արտոնագրեր			

VI. Գնումների գործընթաց

Դաշտ	Արդյո՞ք պահանջվում է (այո/ոչ)	Կարգավիճակը (Նախատեսված / Մշակման փուլում / Ավարտված)	(Սպասվող) Ավարտի ամսաթիվը
Գնումների պլանավորում			
Գնումների փաստաթղթերի առկայություն			

VII. Ինստիտուցիոնալ պատրաստվածություն

Դաշտ	Պատասխան
Իրականացնողի կարողություններ (Բավարար / Անհրաժեշտ է աջակցություն)	
Տեխնիկական թիմի առկայություն՝ իրավասու մարմին, հիմնադրամ, պետական մասնակցությամբ ընկերություն, տեխնիկական աջակցություն	
Տեխնիկական աջակցության հասանելիություն (եթե դիմում է ներկայացվել, ապա դրա մանրամասները, եթե դեռևս չի ներկայացվել, ապա ամենահամապատասխան աղբյուրը)	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ